

Պոմպէ (Ժանը դէ) առնել զամենայն 'ի փառս
Հռովմայ, և մի ինչ 'ի մեր. համաշունչ նահատա-
կել 'ի սէր Հռովմայ 'ի կեանս և 'ի մահոս: Եր-
թիցուք ապա, երթիցուք 'ի հանդէս մեծի գոր-
ծոյս, զի անագանեաց:

ՍՅԼԲ. Հապա երթիցուք. (այս աստիճանն Բրաբուս
յէքո Ժոյ):

Կը շարունակուի:

Բ Ա Ն Ա Լ Ի Ք

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՑ

(Տես երես 63)

362 Ինչո՞ւ համար երկու փայտի կտոր
աւելի լաւ կ'այրին՝ քան թէ մէկ հատն: —
Որովհետեւ օգն կը մտնէ երկու կտորնե-
րուն մէջ տեղ, և հոն կը պատճառէ պզտի
յորձանք մը:

363 Ինչո՞ւ համար փայտն կամ թուղթն՝
եթէ թաթխուին աղի, կրի, փոսփորի կամ
անուշադրի լուծմանց մէջ չեն այրիր, թէ-
պէտ և կրակի դրուած ալ ըլլան: — Նախ,
որովհետեւ աղային քոսը՝ որ կը պատէ այս
դոյութեանց մակերևոյթը՝ և այն աղերուն
ջուրն կ'արգելուն թթուածինը ուղղակի ա-
ծուողին վրայ հասնելու: — Բ. Ասով տաք-
նալն ալ շատ ազդու չըլլալով, միայն ջրա-
ծին կ'արձրկուի և կ'այրէ ամենապզտի
բոցով մը, նոր ջուր ձեւացընելով, որ նոյն-
պէս կ'արգելու կիզումը:

364 Ի՞նչ բան է այրալին: — Գոյացու-
թիւն մ'է՛ որ զուգադրելով թթուտներու
հետ՝ դանոնք կը չէզոքացընէ, ինքն ալ չէ-
զոքացած կը մնայ, աղեր պատճառելով, որ
գրեթէ բոլոր լուծանելի են:

365 Ինչո՞ւ համար երբեմն կը հանդիպի՝
որ տեսակ մը փռանց մէջ կը տեսնուին բո-
ցի ցորմունք՝ որ կ'անցնին զիրենք պատող
երկաթեայ ցանցածէ հիւսուածքէն (կամ
կասկարայէն): — Այս բանս կը պատահի՝
եթէ այս տաքցած կասկարային գոտիները
(կամ ձողերը) հաղորդուին գետնածուղի
կտորներու հետ. որով այն ատեն այս կի-
զանուէն բերուած տաքութիւնն կ'արձը-
կէ բորբոքելի կազեր, որոնցմով ինքն լի է,
և այս կազերն ալ շոջափուելով փուռին
զազազէն՝ կը բորբոքին և կը պատճառեն
այն ցորմունքը:

366 Ինչո՞ւ համար շատ հեղ տժգոյն կա-
պոյտ բոց մը կը տեսնուի շրջապատոյտ՝ ա-
ծուղէ կրակի մը վրայ: — Որովհետեւ ստո-
րին կարգերուն կրակ կտրած անոնք կը
զուգադրի այն անոնքին թթուտին հետ՝ որ

կը ծագի անուղին վերի կարգերուն այրե-
լու ատեն, որոնք ունին անմիջական շոջա
փում մը օդուն թթուածընին հետ, և կը
պատճառէ նոր բորբոքելի կազ մը (ածղու-
կի քրուալ), որ կ'այրի կապոյտ բոցով:

367 Ի՞նչ պատճառաւ երբեմն կրակին
ըյսն աւելի խիտ կամ սաստիկ կ'երևի: —
Կրակի կամ կանթեղի մէջ լուսոյ խտու-
թիւնը հետեանք է այն ճերմակութեան՝
զոր կ'ունենայ անոնքին 'ի ձեռն կիզման.
Երբոր անոնքն բոլորովին ճերմակի դառ-
նայ՝ կիզումն ալ կատարեալ կ'ըլլայ և ըյսն
շատ խիտ. իսկ եթէ կատարեալ չըլլայ՝ ըյսն
ալ ծրխով կ'աղօտանայ:

368 Ինչո՞ւ համար քօրն գետնածուղի պէս
բոց չարձրկեր: — Վասն զի այն կազն՝ որ քօ-
քին մէջ բոց կը ծագէ՝ արդէն սպառուած
է, և քօքն ալ անկիզանելի կազ մը առաջ
կը բերէ (ածղային թթուտ):

369 Ո՞ր կազն է՝ որ բոց կը պատճառէ
գետնածուղին մէջ: — Ջրածին կրկնածղեայ,
որ բազկացած է անոնքին և ջրածընէ: Այս
երկու տարերքս կիզման միջոց մէկ մէկէ կը
զատուին, և կը կազմեն ուրիշ նոր բաղա-
դուութիւններ:

370 Ինչո՞ւ համար տաք ատեն կրակի մը
բոցը աւելի երկայն կը դիմանայ քան ցուրտ
ատեն: — Որովհետեւ սառնամանեաց ա-
տեն օդը խիտ կ'ըլլայ և կրակարանին վրայ
թթուածընի մեծ քանակութիւն մը կը բերէ.
Հետեաբար կիզանուտք մեծաւ արագու-
թեամբ կ'այրին, թոչական կազերն ալ ա-
ւելի շուտ կը սպառին:

371 Ինչո՞ւ համար կրակն ձմեռը աւելի
ուժով կ'այրի քան թէ ամառը: — Որովհե-
տեւ ծրծմունքն ծուխին անցքերուն մէջ ա-
ւելի դիւրաւ կ'ըլլան երբ օդն ցուրտ և
խիտ է:

372 Ինչո՞ւ համար այն ծրծմունքն աւելի
ուժով կ'ըլլան՝ երբ օդն ցուրտ և խիտ է: —
Որովհետեւ շատ տարբերութիւն կայ ծա-
նութեան ընդ մէջ գէպի վեր բարձրացող
տաք օդուն և այն օդուն սեանը՝ որ զայն
կը բարձրացընէ. հետեաբար, տաքցած
օդն կը բարձրանայ և արագաբար դուրս
կը մղուի քան զայն՝ որ ծխանին ստորին
բերնին վրայ կը ճնշուի:

373 Ինչո՞ւ համար կրակն նուազ ժրու-
թեամբ կ'այրի ամառը քան թէ ձմեռը: — Եր-
կու պատճառի համար. Նախ, ամառնային
տաքութիւնը կ'անօսրացընէ զօդը, և որով-
հետեւ այսպէս յեղափոխեալ օդն աւելի
քիչ կը կռէ՝ քան թէ ցուրտ օդի հաւասար
սիւնակ մը, կը հետևի որ որոշեալ ժամա-
նակի մը մէջ՝ կրակարանին վրայ աւելի
փոքրիկ քանակութիւն մը կ'արձարծի:

Բ. Անօսրեալ օգն տկար կերպով կիզում կը ներգործէ, որով բարձրացող սիւնակը նուազ տաքցած կ'ըլլայ, և ծրծու մնալ աւելի պակաս:

374 Ինչո՞ւ համար բարձր լերանց դագաթին վրայ կրակն նուազագոյն բոցով կ'այրի: — Որովհետեւ այն բարձր տեղերուն վրայ օգն շատ թեթեւ է, և քիչ տարբերութիւն կ'ըլլայ ընդ մէջ բարձրացուցիչ օգուն ծանրութեան և ընդ մէջ տաքցած օգուն. դարձեալ, բարձր լերանց վրայ օգն նուազ խիտ է, և որոշեալ ատենի մը մէջ կրակին վրայ աւելի քիչ թթուածին կը հասնի:

375 Ինչո՞ւ համար բաց դաշտի մէջ կրակը աւելի վառ կ'այրի, քան թէ սենեկի մը մէջ: — Ա. Որովհետեւ օգն աւելի խիտ է դաշտի մէջ քան թէ տաք յարկի մը մէջ: Բ. Օգն աւելի դիւրութեամբ կըրնայ հասնիլ կրակին վրայ՝ այրած օգուն տեղը բռնելու համար:

376 Ինչո՞ւ համար կրակն աւելի աղէկ կ'այրի՝ երբ կը սկստի սառն կապիլ, քան երբոր սկստի լուծուիլ: — Որովհետեւ այս ետքի պարագայիս մէջ օդը լի կ'ըլլայ ջրային շագիով, և խոնաւ օդու մասն աւելի պակաս կը կռէ քան հաւասար մասն չոր օդու:

377 Ինչո՞ւ համար ծանր օգն թեթեւ օգէն աւելի լաւ կ'արծարծէ կրակը: — Որովհետեւ այն հովու ընթացքն՝ որ կը ձեւանայ երբ օգն թեթեւ է՝ աւելի տկար կ'ըլլայ, և յարմար չէ կիզումը արծարծելու և իրեն հետ տանելու ելած ծուխը և կազերը:

378 Ինչո՞ւ համար կրակն լաւ կ'այրի՝ երբ հով կը փչէ: — Որովհետեւ օգուն արագարագ նորոգուիլը կրակին վրայ կը բերէ մեծագոյն մասն թթուածընի և կը մատակարարէ առատ սնունդ մը:

379 Ինչո՞ւ համար փուք կը գործածեն մարմրող կրակը արծարծելու: — Որովհետեւ այս գործիքներն կրակին վրայ կ'անցընեն օդոյ մեծ քանակութիւն մը, և անով կ'աւելցընեն անոր ընթացքը:

380 Ինչո՞ւ համար երբեմն ծխանաւոր կրակարաններու վրայ ծակած երկաթէ թիթեղ կը դնեն, որպէս զի անոնց վրայ գրուի կիզանուտն: — Այն թիթեղներն կամ ձողիկներն կը ստիպեն զօդը կրակին միջէն անցնելու, և կ'արգելուն զայն՝ որ չպաղեցընէ վեր բարձրացող օգուն սիւնակը:

381 Ի՞նչ պատճառաւ փռան մը մէջ վառած կրակն թոնրի (կամ անգղիացի բու-

խերիկի) մէջ վառուածէն աւելի շուտ կը սպառուի: — Որովհետեւ օգն՝ որ կը թափանցէ փռան մէջ՝ ստիպեալ է այրող կիզանուտին միջէն անցնելու, այս պատճառաւ խիստ շատ տաքնալով սաստիկ ալ կը բարձրանայ, և նոր օդի մեծ քանակ մը վար կը քաշէ:

382 Ինչո՞ւ կը պատճառուի կրակին շառաչումն փռանց մէջ: — Օդէն, որ կրակին մէջ թափանցելով անհաւասար փչմամբ և դժուարաւ անցնելով ճեղքերէն, կը բարձրանայ սաստիկ արագութեամբ ծխանին մէջ:

383 Ինչո՞ւ համար շառաչուին կը նուազի՝ երբ փռան դուռը բացուի: — Նախ, որովհետեւ օդը կարենալով դիւրութեամբ փռան մէջ մտնել՝ աւելի նուազ թրթուումն կը պատճառէ: Բ. Քիչ տաքցած ըլլալով, բարձրացող օգու սեան քաշող ուժն ալ տկար կ'ըլլայ:

384 Կիզման ատեն ի՞նչ կազ կը ծագի: — Ածդայիև քրոստ, որ կը ձեւանայ կիզանուտներու ածղուկին խառնմամբը օգուն թրթուածընին հետ:

385 Ինչո՞ւ համար անբոց կրակի մը վրայ բռնուած թըղթի կտոր մը չայրի, այլ ածուղ կը դառնայ: — Որովհետեւ խիստ թանձր կրակի մը ածղուկն բաւական տաք է՝ ուղղակի թթուածընին հետ զուգադրուելու համար. այս զուգադրութենէն կը ծագի ածղային թթուտն, որ շուտ մը կը պարփակէ կրակին վրայ բռնուած թըղթին կտորը. այս կազը ոչ կ'այրի, ոչ ալ կ'այրէ ուրիշ մարմինները՝ որ իրեն մթնոլորտին մէջ ընկղմած ըլլան:

386 Բայց ինչո՞ւ համար եթէ յանկարծ սենեկին դուռը բացուի, կամ եթէ թըղթին վրայ փչուի, մէկէն կ'այրի: — Որովհետեւ անկէ օգու հոսանք պատճառուելով, կը շարժէ ածղային թթուտն կոյտը՝ որ թուղթը կը պատէ, և թուղթն ալ կրակին ազդեցութեանը տակ կ'ընկնայ:

387 Ինչո՞ւ համար եթէ կրակին վրայ մոխիր դրուի՝ երկայն ատեն կը դիմանայ: — Որովհետեւ մոխիրն կը խափանէ օգուն թթուածընին ազատ անցքը, բայց զանկայ բոլորովին չարգիլեր. հեռաբար կիզանուտը դանդաղաբար կ'այրին և երկայն ատեն անսպառ կը մնան:

Կը շարունակուի:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ